ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

05. 10. 2023

No 01/01-1173

«Նոլինա» ՍՊԸ
(ՀՎՀՀ 01304055
ք. Երևան,Դավթաշեն 10/7,
հեռ. 095-333-757,
էլ հասցե eloyanvaruzhan2020@gmail.com)

Ծանուցում
(Պայմանագիրը ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին)

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «Նոլինա» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 25.07.2023թ. կնքվել է N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-23/ՄՀՀ-1 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր), որի շրջանակներում Ընկերությունը պետք է մինչև 2023թվականի սեպտեմբերի 2-ը մատակարարեր Մուտքի հսկողական համակարգ (դեմք, ձեռքի ափ և քարտ կարդացող սարք՝ իր կանգնակով դրսի և ներսի) - 19 հատ: Սակայն 2023թվականի օգոստոսի 24-ին Ընկերությունը գրություն է ներկայացրել առաջարկելով մատակարարման ժամկետը երկարացնել 30 օրացույցային օրով, սակայն Պատվիրատուն մատակարարման ժամկետը երկարացրել է 10 օրացույցային օրով, որի հիման վրա 2023թվականի օգոստոսի 28-ին կնքվել է համաձայնագիր, ըստ որի մատակարարման վերջնաժամկետը է սահմանվել 2023թվականի սեպտեմբերի 12-ը: Համաձայն Պայմանագրի 2-րդ մասի 2.1.7 կետի գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Նույն պայմանագրի 2-րդ մասի 2.1.7.1 կետ բ) ենթակետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավել: Հիմք ընդունելով վերոգրյալը «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծում է պայմանագիրը ամբողջությամբ:

Տեղեկացնում ենք, որ «Նոլինա» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900018001876 հաշվեհամարին փոխանցել **32450** (երեսուներկու հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ որպես տուգանք՝ (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) և **45430** (քառասունհինգ հազար չորս հարյուր երեսուն) ՀՀ դրամ որպես տույժ՝ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), տույժը հաշվարկված է մինչև 03.10.2023թ.: Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **665 000** (վեց հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը կազմում է **997 500** (ինը հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որոնք անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900018001876 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե մինչև 2023թվականի հոկտեմբերի 9-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **665000 (վեց հարյուր վաթսունհինգ հազար)** ՀՀ դրամ պայմանագրի կատարման ապահովում և **997500 (ինը հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր)** ՀՀ դրամ որպես որակավորման ապահովում, ապա «Նոլինա» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական հաշվեհամարին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2023թվականի հոկտեմբերի 9-ը ներառյալ ներկայացնել «ՀՊՏՀ» ՊՈԱԿ-ի Գնումների բաժին 501 սենյակ:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ռեկտոր՝ **Դ. Գալոյան**